ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ

ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆԻՆ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրելով Գևորգ Պետրոսի Ազարյանի կողմից գրված Մրցույթի կազմակերպության զարգացման նախնական ծրագրի վերաբերյալ փուլի արդյունքները ուղղորդված լինելու մասին դիմում-բողոքը, Մրցութային փաթեթը, մրցութային հանձնաժողովի արձանագրությունները, որոշումները և Գևորգ Պետրոսի Ազարյանի մասնակցության մասով ձայնագրությունները՝ բողոքարկման հանձնաժողովը եզրակացրեց.

1. ՀՀ Լոռու մարզի «Ալավերդու բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի թափուր պաշտոնի համար 2019 թվականի հոկտեմբերի 8-ին Լոռու մարզպետարանում անցկացված մրցույթը անցել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 7-ի թիվ 992-Ն որոշման պահանջներին համապատասխան:

2. Մրցույթի մասնակից Գևորգ Պետրոսի Ազարյանը Մրցույթում հաղթող չի ճանաչվել Մրցութային հանձնաժողովի քվեարկությանը մասնակցած անդամների թվով՝ 1 կողմ, 6 դեմ և 0 անվավեր քվեաթերթիկների ամփոփման արդյունքում՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 7-ի թիվ 992-Ն որոշման 62-րդ կետի:

3. Բողոքարկման հանձնաժողովը եզրակացրեց, որ Մրցութային հանձնաժողովի քվեարկության արդյունքում կազմված եզրակացության մեջ բացակայում է Գևորգ Պետրոսի Ազարյանի նկատմամբ որևէ ուղղորդվածություն:

Արտաշես Ադլոյան

Ալիկ Սահական

Արմեն Սաֆարյան

Դավիթ Հովսեփյան

11.10.2019թ.

ք. Վանաձոր

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ «ԱԼԱՎԵՐԴՈՒ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԻ ՀԱՄԱՐ ԱՆՑԿԱՑՎԱԾ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԲՈՂՈՔԸ ՔՆՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի «Ալավերդու բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի թափուր պաշտոնի համար անցկացված մրցույթի /այսուհետ՝ Մրցույթ/ մասնակից Գևորգ Պետրոսի Ազարյանի 2019 թվականի հոկտեմբերի 8-ի դիմումը, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի վարչական շենքում 2019 թվականի հոկտեմբերի 11-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի «Ալավերդու բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի թափուր պաշտոնի համար անցկացված մրցույթի արդյունքների վերաբերյալ բողոքը քննող հանձնաժողովի նիստը:

Նիստին մասնակցում էին Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի 2019 թվականի հոկտեմբերի 11-ի թիվ 528 կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովի բոլոր անդամները:

1. Արտաշես Ադլոյան - ՀՀ Լոռու մարզպետարանի անձնակազմի կառավարման բաժնի պետ
2. Ալիկ Սահակյան - ՀՀ Լոռու մարզպետարանի իրավաբանական բաժնի պետ
3. Դավիթ Հովսեփյան - ՀՀ առողջապահության նախարարության անձնակազմի կառավարման վարչության գլխավոր մասնագետի պաշտոնակատար
4. Արմեն Սաֆարյան - ՀՀ առողջապահության նախարարության բժշկական օգնության քաղաքականության վարչության բժիշկ-փորձագետ

Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվեց Գևորգ Պետրոսի Ազարյանի կողմից գրված Մրցույթի կազմակերպության զարգացման նախնական ծրագրի վերաբերյալ փուլի արդյունքները ուղղորդված լինելու մասին դիմում-բողոքը, ինչպես նաև մրցութային փաթեթում առկա փաստաթղթերը: Բողոքի քննարկմանը՝ բողոքարկման հանձնաժողովի կողմից, հրավիրվեցին Մրցութային հանձնաժողովի անդամներ՝ Լոռու մարզպետի տեղակալ Գայանե Մարկոսյանը և մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Արթուր Մխիթարյանը: